

**ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանի շնորհավորական ուղերձը՝
Անկախության տոնի առթիվ**

Սիրելի՛ սյունեցիներ,

Շնորհավորում եմ բոլորիս մեր գլխավոր պետական տոնի՝ Անկախության օրվա կապակցությամբ: Տոն, որն անկասկած թանկ է ու նվիրական մեր ժողովրդի համար: 22 տարի առաջ այս օրը նոր էջ բացեց հայ ժողովրդի պատմության մեջ՝ չնայած վիճակված բազում փորձություններին և մարտահրավերներին:

Դժվարություններ, որոնց հաղթահարումը ավելի պատվարժան է դարձրել մեր անցած ուղին, առավել արժեքավոր այն գոհողությունները, որ ունեցել ենք մեր պետականության կերտման ճանապարհին:

Բոլոր ժամանակներում էլ Սյունիքը եղել է հայոց ազատագրական պայքարի և անկախության գլխավոր հենասյուներից մեկը:

Եվ այսօր էլ, երբ Հայաստանի անկախ պետությունը կայացած իրողություն է ու իր արժանի տեղն է զբաղեցնում ժողովրդավարության ուղին բռնած աշխարհի մյուս երկրների շարքում, մենք շարունակում ու շարունակելու ենք ներդնել մեր ջանքերն ու ներուժը՝ հանուն վաղվա օրվա նկատմամբ մեր հավատքի ամրապնդման, մեր երկրի բարգավաճման ու զորացման:

Կրկին շնորհավորելով ձեզ, սիրելի՛ սյունեցիներ, այս պատմական և ուրախալի օրվա առթիվ՝ մաղթում եմ բոլորիս խաղաղություն, քաջառողջություն և ուժ ու եռանդ՝ ի բարօրություն մեր ընտանիքների և մեր ժողովրդի:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ



Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

20 սեպտեմբեր 2013թ.